

ԳԼՈՒԽ ԻԹ

Կարևոյ դաշտը պատերազմի ասպարեզն էր, ուր երկու բանակ իրար դեմ կանգնած՝ զիրար կը դիտէին օրերով: Թեոդորոս իմանալով թէ իրեն օգնութեան կ'ուզար տարոնացի մեծ խմբով Յամազասպ Մամիկոնեան՝ գիշերով անցաւ Եփրատ եւ բանակեցաւ Կարևոյ քաղաքի հարաւային բլրոց վրայ, յոյս ունէր նաեւ այդ դիրքով արգիլել թշնամուռոյն հասնելու ունէ՛ր օգնութիւն, որ կրնար գալ արեւմուտքէ: Մաւրիանոս այս շարժումնքին կարելորութիւնն ուշ իմացաւ. ուստի պատերազմը ուզեց գրգռել, վասնզի օրաւոր կը տեսներ, որ հայոց բանակը կը զօրանար, եւ իրեն նոր օգնութիւն չէր հասներ: Բայց Թեոդորոս բացէիբաց մերժեց պատերազմը, եւ բավականացաւ իւր բանակն ամրացնելով: Գիտնալով, որ յունաց մեծ ուժը իրենց հետեւակազօրին վրայ է, կը ցրուէր իւր հեծելոց խումբը դաշտին վրայ, արգիլելով իրենց հասնիլ պաշար՝ պարէն եւ ճարակ անասնոց: Մեծ յոյսով կը սպասէր նաեւ Փոքր հայոց Վասակայ եւ Սուրենի օգնութեան. ուստի պատերազմն ամենեւին վտանգի դնելու յոյս չունէր, թեպէտ ոմանք նախարարք հայոց սկսան գանգոյիլ այս դանդաղութեան վրայ: Իսկ երբ հասաւ Յամազասպ, այն ատեն որոշեց պատերազմը, եւ առաւօտուն, երբ փողերը պիտի հնչեցնէին, ահա երկու հազար Ռշտունեաց նոր զնդով կը հասներ Գրիգորմամիկոնեան, եւ այդպիսի վայրկենի եկած փոքր օգնութիւնը նաեւ յաջողութեան նշան համարուեցաւ բանակին մէջ:

Մաւրիանոս այն ժամանակի յոյն զօրավարաց առաջինը կը համարուէր իւր փորձառու հմտութեամբ եւ յանդգնութեամբ, ուստի պատերազմը յամառ եւ արիւննուշտ եղաւ, եւ միւսը հա՛յ նախարարաց յանդգնութիւնը, որ թշնամուռոյն աջ թելը հալածելու համար՝ իրենց կեդրոնէն հեռանալով վտանգի մէջ դրին յաղթութիւնը՝ եւ այս դէպքը Թեոդորոսի մեծ տագնապ կը բերէր, եւ Գրիգորի նորահաս ու յոգնած ոշտունականք հագիւ թէ կը տոկային յունաց յարձակմանց դիմադրելու՝ եւ կարկամեալ մնացեր էին չի կրնալով վանել, — ահա Եփրատայ ափունքն ի վեր փոշի մ'է երեւցաւ. հազարի չափ ձիաւորաց խումբ մը կը հասներ սուրալով, գռռալով, իրենց նշաններէն եւ դրօշակներէն իմացաւ Թեոդորոս թէ Սուրենի խումբն էր, ուստի ըսաւ Գրիգորի խումբին. «Ձեր յաղթութիւնը յափշտակելու համար գունդ կը հասնի, տղա՛ք, եւ դուք կը դանդաղի՛ք»: Այս համառօտ խօսքերն ահագին ձայնիւ զրուցուած եւ լսուած ամենէն՝ կատաղութեամբ լցուց զօրքը, յոյնք սկսան ընկրկիր Իսկ երբ Սուրենի մոլեկան գունդն հասաւ՝ բոլորովին խորտակեցան, խառնիխուռն փախան քաղաք. հագիւ յունաց քառորդ մասը կրցաւ ազատիլ, մեծ մասը սրոյ ճարակ եղաւ, եւ շատ քիչեր գերի ինկան: